«ՀԱՅԱՑՔ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1. Հոդվածում պետք է արտացոլված լինի արդիականությունը, ուսումնասիրման մեթոդաբանությունը եւ ստացված տվյալների վերլուծությունը.

2. Հոդվածի վերնագիրը պետք է ամբողջությամբ արտացոլի հոդվածի բովանդակությունը.

2.1. Հոդվածը պետք է ունենա հետեւյալ կառուցվածքը.

- ներածություն

- նյութը եւ մեթոդը

- արդյունքներ եւ վերլուծություն

- եզրակացություններ եւ առաջարկություններ

- օգտագործված գրականության ցանկը

2.2. Հոդվածը ընդունվում է էլեկտրոնային տարբերակով (PDF եւ WORD ձեւաչափով)։

3. Տեղադրման հաջորդականությունը։

3.1. Հեղինակի (հեղինակների) ազգանունը, անունը եւ հայրանունը։

3.2. Հեղինակի ներկայացրած բուհը կամ գիտահետազոտական կենտրոնի անվանումը։

3.3. Հեղինակի կարգավիճակը (բակալավրիատի ուսանող, մագիստրանտ, հայցորդ, ասպիրանտ եւ այլն)։

3.4. Գիտական ղեկավարի անունը եւ ազգանունը, գիտական աստիճանը եւ կոչումը։

3.5. Հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն եւ հեռախոսահամարը։

3.6. Հոդվածի վերնագիրը։

3.7. Մինչեւ 5 բանալի բառ։

3.8. Հոդվածներն ընդունվում են հայերենով։

3.10. Հեղինակների թիվը չպետք է գերազանցի 2-ը։

4. Օգտագործված գրականության ցանկ

4.1. Գրականության հղումները կատարվում են տեքստում՝ փակագծում նշելով հեղինակին եւ հրապարակման տարեթիվը։

4.2. Հոդվածում պետք է օգտագործված լինի նվազագույնը 3 այլ հեղինակների աշխատություն:

5. Հոդվածը պետք է ունենա ամփոփագրեր՝ հայերեն եւ անգլերեն լեզուներով:

6. Յուրաքանչյուր լեզվով ներկայացված ամփոփոգրի ծավալը չպետք է գերազանցի 500 նիշը:

7. Հոդվածներին ներկայացվող տեխնիկական պահանջները.

7.1. Հայերեն տեքստերը՝ GHEA Grapalat, անգլերեն տեքստերի դեպքում՝ տառատեսակը Times New Roman.

7.2. Տառաչափը՝ 12, միջտողային տարածությունը՝ 1,5, վերնագիրը՝ մեծատառերով:

7.3. Հոդվածի առավելագույն ծավալը չպետք է գերազանցի 10 համակարգչային շարվածքով էջը, նվազագույնը՝ 5-ը:

8.Ներկայացվող հոդվածները պետք է ունենան մասնագիտական հետեւյալ ուղղությունները.

– Ագրոէկոլոգիա եւ ագրոնոմիա

– Անասնաբուժական բժշկագիտություն եւ անասնաբուծություն

– Ճարտարագիտություն

– Սննդագիտություն եւ կենսատեխնոլոգիաներ

– Տնտեսագիտություն եւ ագրոբիզնես

– Հասարակական գիտություններ